ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Ռուբիկ Հակոբյանի և Թևան Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»

AJV-45-05_2014-10-30_01d10.1d18355-14_2014-11-05_3D9CAD

Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (*Պ-628-06.10.2014-ՏՀ-010/0* և *Պ-628$^{1-5}$-06.10.2014-ՏՀ-010/0*) վերաբերյալ:

I. «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի, 4-րդ և 5-րդ հոդվածների համաձայն՝ նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, 7-րդ և 8-րդ հոդվածները: Օրենքի նախագծի հետ ներկայացված հիմնավորման համաձայն՝ նշված փոփոխությունների նպատակը հրապարակման վճարովի լինելը վերացնելն է:

Այդ առումով օրենքի նախագծով ներկայացված փոփոխությունները գտնում ենք ոչ նպատակահարմար և հայտնում ենք, որ կայքում հրապարակային ծանուցումն անվճար լինել չի կարող, քանի որ կայքում հրապարակային ծանուցման տեղադրման համար օգտագործվում են մարդկային և ֆինանսական ռեսուրսներ, մասնավորապես՝ իրականացվում են էլեկտրոնային կայքի վարում, էլեկտրոնային կայքի տեխնիկական սպասարկում, կայքում համապատասխան նյութի տեղադրում և այլ ծառայություններ: Հետևաբար, հաշվի առնելով հրապարակման համար օգտագործվող ռեսուրսները, վերոնշյալ ծառայությունները չեն կարող սպասարկվել անվճար, դրանց մատուցման համար պետք է գանձվի համապատասխան ծառայության վճար:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև օրենքի նախագծի 3-րդ հոդվածին, որի համաձայն՝ հաշվետվությունների տեղադրումը կայքում կատարվում է անվճար:

2. 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ հրապարակային ծանուցումն իրականացվում է իրավաբանական անձանց կողմից՝ պետական գրանցման գրանցա-

մատյանում գրանցված էլեկտրոնային փոստից: Հարկ է նշել, որ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հրապարակային ծանուցումը պետք է ներկայացնի այն հրապարակելու լիազորություն ունեցող անձը կամ նրա լիազորած անձը:»: Օրենքի նախագծով առաջարկված նորմի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ օրենքի նախագծով հրապարակային ծանուցման իրավունք ունեն միայն իրավաբանական անձինք, ինչը հակասության մեջ է մտնում օրենքի ընդհանուր տրամաբանության հետ, քանի որ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հրապարակային ծանուցում հրապարակող անձ է համարվում հրապարակային ծանուցումը հրապարակման լիազորություն ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը:

Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է հանել, քանի որ էլեկտրոնային փոստի միջոցով հրապարակային ծանուցումներ ներկայացնելու դեպքում կառաջանան լրացուցիչ խնդիրներ (ծրագրային փոփոխություններ, ժամանակի կորուստ, կայքը վարող աշխատողի ծանրաբեռնվածության ավելացում և այլն): Հայտնում ենք նաև, որ անհատական էլեկտրոնային փոստի համակարգի ներդրմանը զուգահեռ՝ կներդրվեն ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման շատ ավելի պարզեցված ընթացակարգեր:

II. «Ձանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 12-րդ հոդվածով նախատեսվում է լրատվական գործունեություն իրականացնողի կողմից մինչև յուրաքանչյուր հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 15-ը «Տարեկան հաշվետվություն» վերնագրի ներքո ներկայացնել նախորդ տարվա ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունները՝ նշելով համախառն եկամտի և դրա կազմում նվիրատվությունների

մասնաբաժնի չափերը: Ընդ որում, հաշվետվության ձևը նախատեսվում է սահմանել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով:

Միևնույն ժամանակ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման սկզբունքները, ստանդարտների կիրառման ուղեցույցները և պարտադիր կիրառման այլ փաստաթղթեր: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով, մասնավորապես, նախատեսված է, որ կազմակերպությունները տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը: Վերը նշված օրենքի նախագծում առաջարկվում է կիրառել «ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններ» ձևակերպումը, որը բարդություններ կստեղծի այն իրավակիրառ սուբյեկտների համար, որոնք կգործեն նշված օրենքների ազդեցության ոլորտում: Օրենքների նախագծերի ուսումնասիրությունից հետո ակնհայտ է դառնում, որ օրենքների նախագծերի հեղինակները «ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններ» ձևակերպման մեջ օգտագործված ֆինանսական հաշվետվություն բաղադրիչը չեն նույնացնում «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ֆինանսական հաշվետվությունների հետ:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին:

Հարկ է նշել նաև, որ օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 12-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ լրատվական գործունեություն

իրականացնողը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է նախորդ տարվա ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշվետվության ձևը սահմանվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով: Այդ առումով օրենքի նախագծի հիշյալ մասում անհրաժեշտ է նշել, թե օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որ հաշվետվության ձևն է սահմանվելու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև օրենքի նախագծի 2-րդ հոդվածին:

III. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված փոփոխությունը հստակեցման կարիք ունի, մասնավորապես՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները վերաբերում են բաց ընկերությանը, մինչդեռ նախագծով առաջարկվող փոփոխությունը վերաբերում է ընդհանրապես բաժնետիրական ընկերություններին:

IV. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի համաձայն՝ առաջարկվում է օրենքը լրացնել 20.1 հոդվածով, ըստ որի՝ հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները պարտավոր կլինեն յուրաքանչյուր

հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 15-ից ոչ ուշ հրապարակել նախորդ տարվա ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունները՝ նշելով համախառն եկամտի և դրա կազմում գովազդի, վճարովի եթերաժամի, նվիրատվությունների և այլ եկամուտների, ինչպես նաև ծախսերի չափերը: Ընդ որում, ֆինանսական հաշվետվության ձևը նախատեսվում է սահմանել հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի որոշմամբ:

Միաժամանակ, գործող օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ հեռուստառադիոընկերությունները պարտավոր են ապահովել իրենց ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությունը, մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 1-ը հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան եկամուտների մասին տեղեկատվությունը՝ ըստ հոդվածի 1-ին մասում նշված եկամուտների աղբյուրների: Նշված օրենքների նախագծերից հետևում է, որ հեռուստաընկերություններն ու ռադիոընկերությունները պարտավոր են տարբեր վերջնաժամկետներում ներկայացնել նույնաբովանդակ երկու տարբեր հաշվետվություններ, որոնց ձևերը հաստատում են երկու տարբեր մարմիններ, ինչն առաջ է բերում աշխատանքների կրկնակիություն՝ նշված նույնաբովանդակ հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Բացի դրանից, գործող օրենսդրության համաձայն՝ հեռուստառադիոընկերությունները մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 1-ը արդեն իսկ հրապարակում են իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան եկամուտների մասին տեղեկատվությունը: Այդ առումով օրենքի նախագծի նշված առաջարկությունը չի բխում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունից, որի համաձայն՝ նախատեսվում է նվազեցնել կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների քանակը, պարզեցնել փաստաթղթաշրջանառությունը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված փոփոխությունների անհրաժեշտությունը բացակայում է, և դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրեքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրեքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և ««Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և ««Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Զանգվածային լրատվության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Հիմնադրամների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>>, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>>, <<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին>>, <<Կուսակցությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Զանգվածային լրատվության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Հիմնադրամների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>>, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>>, <<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին>>, <<Կուսակցությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Եզրակացություն

<<Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Զանգվածային լրատվության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Հիմնադրամների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>>, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>>, <<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին>>, <<Կուսակցությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

<<Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Զանգվածային լրատվության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, <<Հիմնադրամների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>>, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>>, <<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին>>, <<Կուսակցությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր)՝ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27[1] և 28-րդ հոդվածների պահանջները: Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի «Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաոլորտների բնութագրիչները հաստատելու մասին» N 34-Ա/1 հրամանի համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) կատարվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ հստակեցվում են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հաշվետվությունների տեղադրման հետ կապված հարաբերությունները:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի Նախագծերի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***բացասական ազդեցություն***՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ.

- Բաժնետիրական ընկերությունների, հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների, ինչպես նաև լրատվական գործունեություն իրականացնողների համար սահմանվում են պարտադիր հրապարակման ենթակա ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունների ձևեր, ինչը լրացուցիչ վարչարարություն է առաջացնում:
- Նախագծով առաջարկվող հրապարակային ծանուցման տեղադրման համար մատուցվող ծառայության համար գանձվող վճարի դրույթը ուժը կորցրած չճանաչելու դեպքում, պարտադիր հրապարակման ենթակա լրացուցիչ հաշվետվությունների հրապարակումը լրացուցիչ ֆինանսական բեռ կհանդիսանա վերոնշյալ սուբյեկտների համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Օրենքների նախագծերի փաթեթի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կլինի բացասական՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է, որ հաշվետվությունների տեղադրումը կայքում կատարվելու է անվճար, իսկ ազդեցության չափը կկազմի տարեկան առնվազն 50 մլն դրամ:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծերի փաթեթի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական և համայնքային բյուջեների ծախսերի, ինչպես նաև համայնքային բյուջեների եկամուտների վրա կլինի չեզոք:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-628-06.10.2014-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-172-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածում՝

1. առաջին մասի 5)-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:
2. առաջին մասի 7)-րդ կետի բ. ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«բ. իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի պետական գրանցման պահին պետական գրանցման վկայականի հետ տրվող եւ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառված էլեկտրոնային փոստը: Գրանցամատյանում պետք է նշվեն էլեկտրոնային փոստի տվյալ հասցեի վավերապայմաններին տիրապետող անձի տվյալները,»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1. առաջին մասում «տեքստը» բառից հետո լրացնել «էլեկտրոնային եղանակով եւ» բառերով:

2. երրորդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Հրապարակային ծանուցումը պետք է առաքվի էլեկտրոնային նամակով սույն օրենքի երկրորդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի բ. ենթակետով սահմանված էլեկտրոնային հասցեից: Կայքը վարողը նամակը ստանալու պահից 72 ժամվա ընթացքում էլեկտրոնային եղանակով հավաստում է նամակի ստացումը:

Եթե նամակի ստացումը սույն մասով սահմանված ժամկետում չի հավաստվել կամ կայքը վարողը նամակը չի ստացել, ապա հաշվետվությունը մեկշաբաթյա ժամկետում առձեռն՝ թղթային եղանակով եւ էլեկտրոնային կրիչի վրա, ներկայացվում է կայքը վարողին:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հաշվետվությունների տեղադրումը կայքում կատարվում է անվճար:»:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 6. Սույն օրենքը՝ բացառությամբ 2-րդ հոդվածի, ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում անհատական էլեկտրոնային փոստի համակարգի ներդրմանը հաջորդող ամսվա 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-628[1]-06.10.2014-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-14-Ն օրենքի 12-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 12. Լրատվական գործունեություն իրականացնողների հաշվետվությունները

Լրատվական գործունեություն իրականացնողը, յուրաքանչյուր հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 15-ից ոչ ուշ լրատվության միջոցի հերթական թողարկման մեջ (եթե դա թողարկվում է) «Տարեկան հաշվետվություն» վերնագրի ներքո, ինչպես նաեւ http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում օրենքով սահմանված կարգով հրապարակում է նախորդ տարվա ֆինանսական եւ վիճակագրական հաշվետվությունները՝ նշելով համախառն եկամտի եւ դրա կազմում նվիրատվությունների մասնաբաժնի չափերը:

Հաշվետվության ձեւը սահմանվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից՝ մեկամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարն իր հրամանով սահմանում է հաշվետվության ձեւը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-628[2]-06.10.2014-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-516-Ն օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասում՝

1. «հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ» բառերը փոխարինել՝ «մինչեւ հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը ներառյալ» բառերով:

2. «հիմնադրամն» բառից հետո լրացնել «օրենքով սահմանված կարգով» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-628[3]-06.10.2014-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի 96-րդ հոդվածում՝

1. առաջին մասում «Բաց Ընկերությունը» բառերը փոխարինել «Յուրաքանչյուր տարի մինչեւ հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը ներառյալ բաժնետիրական ընկերությունն օրենքով սահմանված կարգով» բառերով:

2. առաջին մասի ա) ենթակետում «հաշիվը» բառից հետո միջակետը փոխարինել ստորակետով, այնուհետեւ լրացնել «ընկերության վիճակագրական հաշվետվությունը.» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-628[4]-06.10.2014-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքը (այսուհետ՝ օրենք) 20-րդ հոդվածից հետո լրացնել նոր 20.1. հոդվածով.

«Հոդված 20.1. Հեռուստաընկերությունների եւ ռադիոընկերությունների հաշվետվությունները

Հեռուստաընկերությունները եւ ռադիոընկերությունները յուրաքանչյուր հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 15-ից ոչ ուշ եթերում, ինչպես նաեւ http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում օրենքով սահմանված կարգով հրապարակում են նախորդ տարվա ֆինանսական եւ վիճակագրական հաշվետվությունները՝ նշելով համախառն եկամտի եւ դրա կազմում գովազդի, վճարովի եթերաժամի, նվիրատվությունների եւ այլ եկամուտների, ինչպես նաեւ ծախսերի չափերը:

Ֆինանսական հաշվետվության ձեւը սահմանվում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի որոշմամբ:»:

Հոդված 2. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 17)-րդ կետում «ակտեր» բառից հետո վերջակետը փոխարինել միջակետով:

Հոդված 3. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 18)-րդ կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«18) սահմանում է հեռուստաընկերությունների եւ ռադիոընկերությունների ֆինանսական հաշվետվությունների ձեւերը:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից՝ մեկամսյա ժամկետում, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովն իր որոշմամբ սահմանում է հեռուստաընկերությունների եւ ռադիոընկերությունների ֆինանսական հաշվետվության ձեւը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-628[5]-06.10.2014-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Կուսակցությունը պարտավոր է օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 15-ից ոչ ուշ http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների, ինչպես նաեւ գույքի օգտագործման մասին հաշվետվություն (այսուհետ՝ հաշվետվություն) եւ օրենքով նախատեսված դեպքերում դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացություն:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

2012թ. Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց եւ սկսեց կիրառվել որոշ իրավաբանական անձանց, մասնավորապես՝ հիմնադրամների, կուսակցությունների, ՀԼՄ-ների, բաց բաժնետիրական ընկերությունների կողմից իրենց տարեկան հաշվետվությունները http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու ինստիտուտը, ինչը էապես բարելավեց իրավաբանական անձանց գործունեության հրապարակայնության, թափանցիկության եւ հանրային հաշվետվողականության վիճակը:

Սակայն այդ գործընթացի իրականացման տեխնիկական կողմը շարունակում է մնալ խնդրահարույց: Առկա են մի շարք թերություններ՝ մասնավորապես, թեեւ ինստիտուտը, որպես այդպիսին, ունի էլեկտրոնային ձեւաչափ, սակայն հաշվետվությունները կայքը վարողին ներկայացվում են առձեռն, իսկ դրանց տեղադրումը կայքում ժամանակատար գործընթաց է:

Պրակտիկ գնահատմամբ, մեկ հաճախորդի սպասարկումը տեւում է շուրջ 25 րոպե: Այդ ժամանակահատվածի մի զգալի մասը նվիրվում է տպագրական նիշերի հաշվարկմանը եւ բանկում կամ տերմինալում վճարումներ կատարելուն, ինչը ոչ միայն հաճախորդներից ու կայքը վարողից խլում է ահռելի ժամանակ, այլեւ հանդիսանում ֆինանսական խոչընդոտ:

Առաջարկվող փոփոխություններով եւ լրացումներով նախատեսվում է.

1) սահմանել, որ հաշվետվությունների ներկայացումը պետք է իրականացվի էլեկտրոնային եղանակով,

2) կանոնակարգել պաշտոնական էլեկտրոնային փոստի տրամադրումը իրավաբանական անձանց համար՝ սահմանելով, որ յուրաքանչյուր իրավաբանական անձ պետք է ունենա իր էլեկտրոնային հասցեն՝ իր վավերապայմաններով եւ անհատականացման միջոցներով,

3) վերացնել հրապարակման վճարովի լինելը,

4) ընդլայնել հաշվետվություն հրապարակող սուբյեկտների շրջանակը՝ ընդգրկելով նաեւ հեռուստաընկերությունները, ռադիոընկերությունները եւ փակ բաժնետիրական ընկերությունները, ինչը մեծապես կբարձրացնի թափանցիկության եւ հանրային հաշվետվողականության վիճակը,

5) կայքի վարողների աշխատանքների դյուրացման նպատակով տարբեր սուբյեկտների համար սահմանել հաշվետվությունների հրապարակման տարբեր ժամկետներ: